

ենթարկուի ճշմարտացիության պայմաններուն: Այլ խօսքով, կարելի չէ ըսել թե անոնք՝ *ճիշդ* կամ *սխալ* են:

Մետա-բարոյագիտութիւնը, կը բացայայտէ նաեւ առնչութիւնը՝ բարոյական համոզումներու եւ բարոյական զգացումներու, ինչպէս՝ *յանցանք, վրդովում, ամօթխածութիւն* կամ *կարեկցութիւն*:

Բարոյական համոզումները, բարոյական արարքի կամ բարոյական վարմունքի վերածուելու համար հարկ է նաեւ *շարժառիթներու* (Motivation) առկայութիւնը: Յիշեալ *շարժառիթներու* ծագումը յաճախ արտաքին ազդակներն են, սակայն կան նաեւ ներքին մղումով յառաջացածները: Մետա-բարոյագիտութիւնը, բարոյական համոզումներու այս ոլորտին մէջ, կը հարցադրէ նաեւ ընդհանրապէս *բարոյական վարմունք* ունենալու մասին: Եթէ անհա-տը իրապէս բարոյական համոզումներու տէր է, արդէն ներքին մղումէ մը տարուած կը դիմէ *բարոյական վարմունքին*:

3. ԷԱՔԱՆԱԿԱՆ ՈՒՈՐՏ

Բարոյական դատողութիւնը ուսումնասիրելու ընթացքին, մետա-բարոյագիտութիւնը Էաքանական հարցադրումներ կը կատարէ, ինչպէս օրինակ.-

- Ենթակայական (Subjective) արժէքի հասկացութիւններէն եւ փափաքներէն անդին, արդեօք գոյութիւն ունի՞ն առարկայական (Objective) արժէքներ. կամ
- Արդեօք կարելի՞ է բարոյական դատողութեան պարագային ճշմարտացիութեան արժեւորում կատարել եւ զայն՝ *ճիշդ* կամ *սխալ* որակել:

Եթէ առաջին հարցադրման պատասխանը դրական է, ուրեմն գոյութիւն ունին բարոյական իրողութիւններ. իսկ եթէ պատասխանը բացասական է, ուրեմն բարոյական իրողութիւններ չկան եւ կարելի չէ՝ բարոյական դատողութիւնները *ճիշդ* կամ *սխալ* որակել:

Բարոյական դատողութեան առնչութեամբ, վերոյիշեալ բարոյական իրողութիւններու մասին Էաքանական հարցադրումը պատճառ կը հանդիսանայ բանավէճի մը, մէկ կողմէ՝ *բարոյական իրապաշտութեան* (Moral Realism) հետեւորդներուն իսկ միւս կողմէ՝ *բարոյական հակա-իրապաշտութեան* (Moral Anti-Realism) հետեւորդներուն միջեւ:

• ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Այս ուղղութեան հետեւորդները, կոչենք՝ «իրապաշտներ», ո՛չ միայն պէտք է հաստատեն բարոյական իրողութիւններու գոյութիւնը, այլեւ՝ անոնց Էաքանական յատկանիշները յստակացնեն: Փաստօրէն, այս «իրապաշտներ»ուն համար, ենթակայական (Subjective) ճանաչողականութիւնէն անդին, գոյութիւն ունին՝ առարկայական (Objective) արժէք ունեցող բարոյական իրողութիւններ, որոնք չեն ենթարկուի պայմանագրային համաձայնութիւններու, այլ ունին իւրայատուկ ճշմարտացիութեան յատկանիշներ: Ասիկա կը նշանակէ, որ այս